ՀՀ տարածքային
կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն

Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

giz

Co-financed by
Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development
and Cooperation SDC

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիր

ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամ

ՄԱԿ-ի 2030 Օրակարգի և Կայուն զարգացման նպատակների տեղայնացում համայնքներում

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏ-ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԿԱՆՉ

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝

17 մայիսի, 2023 թ., 17:00

Բովանդակություն

Հապավումների ցանկ 2
Ներածություն 2
1. Հիմնադրամի ընդգրկումը և պահանջները 2
2. Մասնակցայնությունը և համագործակցությունը այլ կողմերի հետ 3
3. Համայնքների տնտեսական զարգացման աշխատանքային խումբը 4
4. Հայտերի ներկայացումը և գնահատումը 4
5. Ծրագրերի իրականացումը և մշտադիտարկումը 6
6. Լրացուցիչ խորհրդատվության տրամադրում 6
7. Հիմնադրամի գործադրման ժամանակացույցը 6

Հապավումների ցանկ

ԳՄՀԸ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակ(ներ)
ՀՏԶ ԱԽ	Համայնքների տնտեսական զարգացման աշխատանքային խումբ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպության
ՏԱՊ	Համայնքի տարեկան աշխատանքային պլան
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Ներածություն

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ, GIZ) և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի[1] շրջանակներում գործող ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) նոր փուլով հայտարարվում է ծրագրային հայտ-առաջարկների կանչ:

Հիմնադրամի միջոցները միտված են աջակցելու ՀՀ համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված փոքր և միջին ծրագրերին՝ առանցքում դնելով Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կայուն զարգացման 2030 Օրակարգը և դրա շրջանակներում սահմանված կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ): Ծրագրային առաջարկները պետք է առնչվեն **2030 Օրակարգին և ԿԶՆ-ներին** առնչվող որևէ ասպեկտի (տնտեսական զարգացում, սոցիալական ինտեգրում, բնապահպանություն կամ 2-3 ոլորտների զուգակցում)՝ հստակորեն ցույց տալով ծրագրի բերած նպաստը համայնքում ԿԶՆ-ների տեղայնացմանը: Հատկապես խրախուսելի են համայնքներում նորարարությունը խթանող, կլիմայի փոփոխությանը հարմարվողականության տեսանկյունից դրական ազդեցություն ունեցող, ինչպես նաև ոչ կենտրոն բնակավայրերում իրականացվող ծրագրերը:

Ծրագրային առաջարկները պետք է հիմնվեն 2030 Օրակարգի առանցքային սկզբունքների վրա, այդ թվում՝

- ոչ ոքի չանտեսել՝ հաշվի առնել բոլորի՝ հատկապես խոցելի խմբերի կարիքները,
- փոխկապվածություն՝ ԿԶՆ-ներին համապարփակ մոտեցում և դրանց միջև կապերի օգտագործում ծրագրի ավելի մեծ ազդեցություն ստանալու նպատակով:

1. Հիմնադրամի ընդգրկումը և պահանջները

Ծրագրերի ոլորտային սահմանափակումներ չկան (ենթակառուցվածքներ, զբոսաշրջություն, բնապահպանություն, ծառայություններ, գյուղատնտեսություն, սոցիալական պաշտպանություն, այլ): Կարևոր է, որ դրանք լինեն հիմնավորված և նպաստեն համայնքի կայուն զարգացմանը՝ նպաստելով համայնքում ԿԶՆ-ների իրագործմանը: Համայնքի առաջնահերթություններին և կարիքներին համահունչ լինելու նպատակով Հիմնադրամին ներկայացվող հայտերը պետք է բխեն համայնքի հնգամյա զարգացման ծրագրից և արտացոլված լինեն կամ ներկայացումից առաջ ներառվեն ՏԱՊ-ում, իսկ ֆինանսավորման հաստատման պարագայում ծրագրային հայտերով նախատեսված գործողությունները պետք է պատշաճ ժամանակին և կերպով արտացոլ-

[1] Ծրագիրն իրականացվում է Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության պատվիրակմամբ և Հայաստանում Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) համաֆինանսավորմամբ:

վեն նաև համայնքային բյուջեում: Լրամշակված ՏԱՊ-ը պետք է տեղադրված լինի համայնքի պաշտոնական վեբ-կայքում: ՏԱՊ-ում պետք է կատարվի նշում առ այն, թե Հիմնադրամին ներկայացվող ծրագրի որ ԿՀՆ-ների, դրանց թիրախների և ցուցանիշների իրագործմանն է նպաստում (կից ուղեցույցին և նախորդող շաբաթներին բոլոր համայնքապետարանների ներկայացուցիչների մասնակցությամբ իրականացված վերապատրաստման դասընթացին ներկայացված մոտեցումներին համապատասխան):

Հիմնադրամը բաց է ՀՀ 64 միավորված և 6 չմիավորված համայնքների համար (Գյումրի, Արզնի, Շամիրամ, Վերին Դվին, Ֆերիկ, Ֆիոլետովո): Հայտերը կարող են ներկայացվել մեկ կամ ավելի համայնքապետարանների կողմից (որպես միջհամայնքային համագործակցության արդյունք): Միջհամայնքային ծրագրային առաջարկների ներկայացումը խրախուսելի է: Դրամաշնորհի չափը կարող է լինել **4-ից 16 միլիոն** ՀՀ դրամ, իսկ միջհամայնքային ծրագրերի դեպքում՝ հասնել մինչև **24 միլիոն** ՀՀ դրամի: Համայնքապետարանի կամ այլ դերակատարների (մասնավոր հատված, այլ դոնոր, քաղաքացիական հասարակության կազմակերպություն) համաֆինանսավորումը պետք է կազմի ծրագրի ընդհանուր արժեքի **առնվազն 10%-ը**: Ի լրումն ֆինանսական ներդրման՝ խրախուսելի է համայնքների կողմից բնեղեն ներդրումը:

Համայնքապետարանը կարող է ներկայացնել **առավելագույնը 3 ծրագրային հայտ**, սակայն ընդգրկուն տարածքային բաշխում ապահովելու համար նախընտրելի է Գնահատող հանձնաժողովի կողմից[2] մեկ համայնքից ընտրել **առավելագույնը մեկ հայտ**: Որպես ավելի խոշոր ծրագրերի մաս ներկայացվող դրամաշնորհային հայտերը կարող են ֆինանսավորվել ծրագրի ընդհանուր արժեքի մինչև 20%-ի չափով (ոչ ավել, քան 16 մլն ՀՀ դրամ, միջհամայնքային ծրագրերի դեպքում՝ ոչ ավել, քան 24 մլն ՀՀ դրամ)՝ կազմելով ծրագրի ինքնուրույն բաղադրիչ և հստակ ցույց տալով, որ ծրագրի ձախողման դեպքում դրամաշնորհի միջոցով ֆինանսավորվող բաղադրիչը կաշխատի և կունենա ինքնուրույն էֆեկտ:

Համայնքապետարանն ապահովում է ծրագրի ամբողջականությունը, ուստի պարտավորվում է բարեխղճորեն կատարել ոչ միայն դրամաշնորհային, այլև համայնքային (կամ ծրագրին մասնակցող այլ կառույցների) միջոցներով ֆինանսավորվող բաղադրիչները: Ծրագրի իրականացման ընթացքում ապրանքների/ծառայությունների գնաճի, արտարժույթի փոխարժեքի տատանման կամ այլ պատճառներով լրացուցիչ ծախսերի առաջացման դեպքում դրանք հոգում է համայնքապետարանը՝ ապահովելու ծրագրի անխափան իրականացումը:

2. Մասնակցայնությունը և համագործակցությունը այլ կողմերի հետ

Ծրագրային առաջարկների մշակումը պետք է տեղի ունենա մասնակցային սկզբունքով: Ծրագրային հայտ-առաջարկների սույն կանչը պետք է տեղադրվի համայնքի վեբ-կայքում, իսկ գաղափարները հավաքագրման համար հնարավորինս օգտագործվի համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) «Մասնակցել համայնքի զարգացմանը բաղադրիչը»: Այն պետք է տրամադրվի նաև բոլոր բնակավայրերի վարչական ղեկավարներին, որոնք էլ իրենց հերթին բնակավայրերում կազմակերպեն լայն քննարկումներ տեղի բնակչության հետ: Կախված առաջարկվող ծրագրի բնույթից՝ համայնքապետարանները պետք է նախաձեռնեն լրացուցիչ քննարկումներ՝ ներգրավելով համայնքի բնակչությանը, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպություններին, իսկ ծրագրային հայտում ներկայացնեն նաև դրանց արդյունքների վերաբերյալ ամփոփագիր:

Այնուամենայնիվ, ծրագիրն առաջնորդողն ու իրականացնողը համայնքապետարանն է, իսկ այլ կողմերը կարող են հանդես գալ որպես մասնակից՝ իրականացնելով ծրագրի բաղադրամաս կազմող, սակայն դրամաշնորհի պայմանագրում չներառված գործողություններ: Դրամաշնորհային միջոցները պետք է օգտագործվեն բացառապես համայնքապետարանի կողմից (ապ-

[2] Տե՛ս բաժին 4.3:

ռանքների/ծառայությունների գնման նպատակով՝ համաձայն դրամաշնորհային պայմանագրի) և չպետք է փոխանցվեն երրորդ կողմի, այդ թվում՝ մասնավոր անձի կամ ընկերության: Ծրագրի արդյունքների կենսունակությունը պետք է ապահովվի համայնքապետարանի կողմից: Որևէ ձևով մասնավոր հատվածի ներգրավումը պետք է հիմնավորվի 2030 Օրակարգի առանցքային սկզբունքներին հղմամբ (օր.՝ մասնավոր ներդրումը պետք է ծառայի ողջ համայնքին և/կամ բարելավի առավել խոցելի խմբերի կենսապայմանները և չհետապնդի բացառապես բիզնես շահեր):

3. Համայնքների տնտեսական զարգացման աշխատանքային խումբը

2017 թ. սկսած գործող՝ համայնքների տնտեսական զարգացման աշխատանքային խումբը (ՀՏԶ ԱԽ) տեղական ինքնակառավարման, պլանավորման, ծրագրերի իրականացման և այլ ոլորտներում փորձ ունեցող, վերապատրաստված մասնագետների խումբ է, որը տրամադրում է խորհրդատվական աջակցություն թե՛ համայնքներին, թե՛ ՀՀ ՏԿԵՆ-ին: ՀՏԶ ԱԽ-ի ղեկավարը ՀՀ ՏԿԵՆ տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետն է:

Սույն Հիմնադրամի գործադրման շրջանակներում ՀՏԶ ԱԽ-ին վերապահված են մի շարք առանցքային գործառույթներ, մասնավորապես՝

- համայնքներին խորհրդատվություն ՏԱՊ-երի և 2030 Օրակարգի թիրախների ու ԿԶՆ-ների համապատասխան ցուցանիշների միջև կապի հաստատման գործում,
- համայնքներին խորհրդատվություն դրամաշնորհային հիմնադրամի շրջանակներում ծրագրային հայտերի մշակման և ներկայացման գործում,
- ստացված ծրագրային հայտերի գնահատում և ներկայացում Գնահատող հանձնաժողովի հաստատմանը,
- հաստատված ծրագրերի իրականացման մշտադիտարկում համապատասխան համայնքների հետ համատեղ,
- 2030 Օրակարգի տեսանկյունից համայնքների ՏԱՊ-երի վերլուծություն և մշտադիտարկման միասնական զեկույցի կազմում:

ՀՏԶ ԱԽ անդամները պատրաստ են իրենց մասնագիտական գիտելիքների ու փորձի ներդրմամբ նպաստել Հիմնադրամի շրջանակներում համայնքների արդյունավետ ներգրավմանը: Խորհրդատվական աջակցություն ստանալու նպատակով համայնքապետարանները կարող են դիմել ՀՏԶ ԱԽ՝ իրենց ամրակցված ներկայացուցչի հետ (տե՛ս հավելված 5):

4. Հայտերի ներկայացումը և գնահատումը

4.1. Համայնքի մակարդակում

Հայտերը համայնքում մշակվում են տարբեր դերակատարների հետ համագործակցությամբ՝ ըստ անհրաժեշտության (տե՛ս բաժին 2): Հայտերը պետք է կազմվեն ձևանմուշին համապատասխան (տե՛ս հավելված 1) և սահմանված կարգով ներկայացվեն ավագանու հաստատմանը: Ավագանու որոշման նախագծի առաջարկվող տարբերակը ներկայացվում է հայտին կից[3]: Հաստատումից հետո համայնքի ղեկավարը և աշխատակազմի համապատասխան մասնագետը (օր.՝ տնտեսական զարգացման պատասխանատուն) ծրագրային հայտը բոլոր կից փաս-

[3] Եթե համայնքում դեռևս ավագանի ձևավորված չէ, ապա կարելի է սահմանված ժամկետում ներկայացնել ծրագրային հայտի փաթեթի մնացած փաստաթղթերը, իսկ ավագանու որոշումը ներկայացնել մինչև ՀՏԶ ԱԽ-ի կողմից հայտերի գնահատման ավարտը: Նման դեպքերում հայտի փաթեթում պետք է լինի համապատասխան պաշտոնական տեղեկագրություն:

տաթղթերով մեկ նամակով ներկայացնում են **ՀՏՋ ԱԽ ղեկավարին (agiloyan@gmail.com) և ԳՄՀԸ-ին (community-development-fund_AM@giz.de)**:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է **2023 թ. մայիսի 17-ը՝ ժամը 17:00-ն**:

Փաստաթղթերի փաթեթում ներառվում են.

- լրացված հայտը,
- ծրագրի բյուջեն՝ նմուշին համապատասխան (տե՛ս հավելված 2),
- համայնքի ՏԱՊ-ից քաղվածք,
- ծրագրային գաղափարների շուրջ քննարկումների վերաբերյալ ամփոփ տեղեկագիր՝ նկարագրելով բնակավայրերից ստացված առաջարկները և համայնքի մակարդակում ընտրության գործընթացը (նմուշ սահմանած չէ),
- ավագանու որոշումը հայտի հաստատման վերաբերյալ՝ նմուշին համապատասխան (տե՛ս հավելված 4),
- տեղեկանք համայնքի բյուջեում համաֆինանսավորման համար պահանջվող գումարի առկայության (այդ թվում՝ բյուջեի վերաբաշխման միջոցով) կամ սպասվող իրատեսական դրամական մուտքերի մասին,
- ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրից քաղվածք համայնքապետարանի աշխատակազմի որպես համայնքային կառավարչական հիմնարկ գրանցման վերաբերյալ:

Պահանջվող տեղեկություններից կամ հիմնավորող փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում ՀՏՋ ԱԽ-ի և/կամ Հանձնաժողովի կողմից հայտը չի դիտարկվի: Հայտը կարող է ներառել նաև այլ, լրացուցիչ տեղեկատվություն (օր.՝ լուսանկարներ, ծրագրի իրականացման տարածքի նկատմամբ համայնքի սեփականությունը հավաստող փաստաթղթեր, հանրային քննարկումների արձանագրություններ և այլն), որը հայտատուն կարող է անհրաժեշտ համարել հայտի ամբողջականությունն ապահովելու տեսանկյունից:

4.2. ՀՏՋ ԱԽ-ի մակարդակում

Հայտերի գնահատման միջանկյալ օղակ է ՀՏՋ ԱԽ-ն, որը հայտերն ստանալուց հետո մասնագիտական եզրակացություն է տալիս հայտի վերաբերյալ և կատարում դրանց գնահատումը՝ ըստ չափանիշների: Գնահատումն իրականացվում է 1000 բալանոց սանդղակով (տե՛ս հավելված 3), որտեղ յուրաքանչյուր չափանիշին տրված է կշիռ: Անցողիկ են համարվում առնվազն 600 միավոր ստացած հայտերը, սակայն վերջնական ընտրությունը կատարվում է մրցակցային սկզբունքով՝ հաշվի առնելով դրամաշնորհային առկա միջոցները: ՀՏՋ ԱԽ-ն իր եզրակացությունները ներկայացնում է Գնահատող հանձնաժողովին:

Գնահատման անաչառությունն ապահովելու նպատակով ՀՏՋ ԱԽ անդամը չի մասնակցում իր համայնքի կողմից ներկայացված հայտի գնահատմանը:

4.3. Գնահատող հանձնաժողով

Գնահատող հանձնաժողովը կազմված է ՀՀ ՏԿԵՆ և ԳՄՀԸ ներկայացուցիչներից: Գնահատող հանձնաժողովի նախագահը ՏԿԵ նախարարի տեղակալն է: Գնահատող հանձնաժողովը քննության է առնում միայն ՀՏՋ ԱԽ-ի գնահատման արդյունքում 600 և ավելի միավոր ստացած հայտերը և հաշվի առնելով ՀՏՋ ԱԽ եզրակացությունները կատարում իր գնահատումը՝ այսպիսով ապահովելով «երկու քննության սկզբունքը» (նույն հայտը քննության է առնվում և գնահատվում երկու տարբեր կառույցների կողմից):

5. Ծրագրերի իրականացումը և մշտադիտարկումը

Վերջնական գնահատման արդյունքում ընտրված ծրագրերի իրականացման նպատակով ԳՄՀԸ-ի և շահառու համայնքապետարանների միջև կնքվում է դրամաշնորհի հատկացման պայմանագիր, որով սահմանվում են դրամաշնորհային միջոցների կառավարման և ֆինանսական հաշվետվողականության դրույթները: Ծրագրերի իրականացման ժամկետն է 01.07.2023 – 31.07.2024: Ըստ անհրաժեշտության պայմանագրերը կարող են կնքվել ավելի կարճ ժամկետով (նվազագույնը 6 ամիս):

Ծրագրերի մշտադիտարկումն իրականացվում է ՀՏՋ ԱԽ-ի և ԳՄՀԸ-ի կողմից: Համայնքապետարանները պարտավորվում են ըստ անհրաժեշտության տեղեկություններ տրամադրել ծրագրերի իրականացման ընթացքի, արդյունքների, առաջացած դժվարությունների վերաբերյալ, ինչպես նաև ապահովել առնվազն տնտեսական զարգացման պատասխանատուի մասնակցությունը մշտադիտարկման այցերին: Ծրագրի իրականացման ավարտին վերջնական ֆինանսական հաշվետվության հետ միասին համայնքապետարանները ներկայացնում են նաև բովանդակային հաշվետվություն:

6. Լրացուցիչ խորհրդատվության տրամադրում

Հիմնադրամի շրջանակներում հնարավոր է լրացուցիչ մասնագիտական խորհրդատվության տրամադրում ընտրված ծրագրերի ոլորտների վերաբերյալ: Օրինակ՝ եթե համայնքապետարանը ծրագրի շրջանակներում նախատեսում է իրականացնել տարբեր տեսակի թափոնների տարաների ձեռքբերում և տեղադրում, սակայն չունի թափոնների տեսակավորման/վերամշակման կազմակերպման բավարար փորձ/կարողություններ, կարող է օգտվել այս դրույթից: Կամ՝ համայնքապետարանը նախատեսում է հիմնել զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն, և կարիք ունի համայնքում զբոսաշրջության խթանման շուրջ մասնագիտական աջակցության:

Նպատակն ընտրված ծրագրերի առավել մեծ ազդեցության ապահովումն է և ոլորտի զարգացմանը նպաստելը: Լրացուցիչ խորհրդատվական աջակցության դիմելու պարագայում համայնքապետարանը լրացնում է հայտի համապատասխան բաժինը: Միևնույն ժամանակ, հայտը կարող է հաստատվել առանց լրացուցիչ խորհրդատվության բաղադրիչի: Ուստի կարևոր է, որ ծրագիրն իրականանալի լինի նաև առանց լրացուցիչ խորհրդատվության:

Հայտի ամբողջական հաստատման դեպքում խորհրդատվության բաղադրիչը չի արտացոլվում դրամաշնորհի հատկացման պայմանագրում և իրականացվում է ԳՄՀԸ կողմից, այդ թվում՝ ծառայությունների մատուցման մրցույթի անցկացում, պայմանագրային հիմունքներով համապատասխան ոլորտի մասնագետ(ներ)ի ներգրավում և վարձատրում: Գործընթացն իրականացվում է դրամաշնորհառու համայնքապետարանների հետ խորհրդակցությամբ՝ հիմնվելով վերջիններիս կոնկրետ կարիքների վրա:

7. Հիմնադրամի գործադրման ժամանակացույցը

Ժամկետ	**Գործողություն**
13 ապրիլի, 2023 թ.	Հայտերի ընդունման մեկնարկ
17-21 ապրիլի, 2023 թ.	Համայնքների հետ առցանց հանդիպումներ հարցուպատասխանի ձևաչափով
17 մայիսի, 2023 թ. (17:00)	Ծրագրային հայտերի ներկայացման վերջնաժամկետ
Մինչև 30 մայիսի, 2023 թ.	ՀՏՋ ԱԽ-ի կողմից գնահատում
Մինչև 6 հունիսի, 2023 թ.	Գնահատող հանձնաժողովի կողմից հաստատում
Մինչև 30 հունիսի, 2023 թ.	Պայմանագրերի կնքում և ծրագրերի իրականացման մեկնարկ